ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո ւ Մ

29 01 «------» ---------- 2014թ. Թիվ 3 ----------

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԻՍԱԿՈՎ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 47/2 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹԻՎ 19 ԵՐԵՔ ՍԵՆՅԱԿԱՆՈՑ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԵԴԱ ՀԱԿՈԲԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, ՕԳՍԵՆ ԳԵՂԱՄԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ, ԶԱՐԻՆԵ ԳԵՂԱՄԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ, ԱՐԱ ԳԵՂԱՄԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սեդա Հակոբի Պողոսյանը, Օգսեն Գեղամի Ավագյանը, Զարինե Գեղամի Ավագյանը և Արա Գեղամի Ավագյանը 1982 թվականից փաստացի բնակվում են նախկին քաղխորհրդի գործկոմի որոշմամբ իրենց հատկացված Արտաշատ քաղաքի Իսակով փողոցի թիվ 47/2 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 19 երեք սենյականոց բնակարանում:

Բնակարանների անհատույց սեփականաշնորհման գործընթացին չեն մասնակցել, որի հետևանքով նրանց կողմից ներկայումս փաստացի զբաղեցրած Իսակով փողոցի թիվ 47/2 բնակելի շենքի թիվ 19 բնակարանը՝ ,,Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 29 հոդվածի հիման վրա հանձնվել է քաղաքային համայնքին, օրենքով սահմանված կարգով տնօրինելու համար:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ընդառաջելով Սեդա Պողոսյանի, Օգսեն Ավագյանի, Զարինե Ավագյանի և Արա Ավագյանի կողմից քաղաքապետարան հասցեագրված 23.01.2014թ. թիվ Պ-037 դիմումին

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Արտաշատ քաղաքի Իսակով փողոցի թիվ 47/2 բնակելի շենքի թիվ 19 երեք սենյականոց բնակարանը նվիրել Սեդա Հակոբի Պողոսյանին, Օգսեն Գեղամի Ավագյանին, Զարինե Գեղամի

Ավագյանին, Արա Գեղամի Ավագյանին:

Բենիամինյան Կարեն	Գալստյան Արթուր
Դերմոյան Արման	Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան	Հովհաննիսյան Վազգեն
Մնացականյան Հարություն	Պողոսյան Գաբրիել
Վարդազարյան Վաչագան	Վարդանյան Ռազմիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո ւ Մ

29 01 4-Ն
«------» ---------- 2014թ. Թիվ ----------

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ Վ.ԱՐՏԱՇԱՏ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, և ,,Հրապարակային սակարկությունների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Արտաշատի քաղաքային համայնքի ավագանու ,,Քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի օտարման /վարձակալության տալու/ կարգը հաստատելու մասին 21.02.2006թ. թիվ 1/8 որոշումը և ,,ԱՐԱ-ԱՐՏ ՌԻԵԼԹԻ,, ՍՊԸ-ի կողմից Արտաշատ քաղաքի Վ.Արտաշատ խճուղի թիվ 7 հասցեում գտնվող շինության հավանական շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը /որակավորման վկայական ԱԳԳ 46/, գնահատման ժամկետը 7-ը նոյեմբերի 2013թ./:

Քաղաքային համայնքի ավագանին **Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարելու քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Արտաշատ քաղաքի Վ.Արտաշատ խճուղի թիվ 7 հասցեում գտնվող շինությունը:
2. Քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Արտաշատ քաղաքի Վ.Արտաշատ խճուղի թիվ 7 հասցեում գտնվող շինության աճուրդային կարգով օտարման մեկնարակային գին սահմանել 456000 /չորս հարյուր հիսունվեց հազար/ ՀՀ դրամ:
3. Աճուրդն անցկացնել բաց, դասական եղանակով:

Բենիամինյան Կարեն	Գալստյան Արթուր
Դերմոյան Արման	Կիրակոսյան Գրիգոր
Հայրապետյան Ռուզան	Հովհաննիսյան Հարություն
Մնացականյան Հարություն	Պողոսյան Գարիկ
Վարդազարյան Վաչագան	Վարդանյան Ռուբեն

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ